

ՄԵԾ ՅՈՐԲԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ



ՄԵՐՍԻՆԻ ՄԷՋ

Ազգային մեծ աօնը հոս տօնուեցաւ իր անուան արժանի շուքովը :
Նախապէս կազմուած Յորբելեանկան Յանձնախումբը բոլոր հրապարակի հայութեան դիմեց որպէս զի-չարաթ օր ընդհանրապէս փակուին խանութները, գործատեղիները, գրասենեակները, ևն. : Դիմուեցաւ նոյնպէս Հայ կաթնիկ և Բողոքական եղբարց՝ հանդիսութեանց մասնակցելու համար, որոնցմէ վերջինները չափազանց ազնուօրէն և պատուարեորէն պաշտօնապէս մասնակցեցան, իսկ կաթնիկները կարգ մը անորոշ նկատումներով և խուսափողական ձեւերով պաշտօնապէս չհաճեցան մասնակցիլ : Թէև հանդէսներուն ներկայ գտնուեցան բաւական թիւով Հայ-կաթնիկ ընտանիքներ, ցաւելով նոյնիսկ իրենց պաշտօնապէս չկարենալ մասնակցելուն :

Շարաթ առաւօտեան ժամերգութեան պատահարար ներկայ գտնուեցաւ Տ. Պետրոս Մ. Վ. Ապաճեան, Հաճնոյ առաջնորդը, որ օրուան վեհութեան նշանակութիւնը լայնատեղեցի ժողովրդեան : Յետ ժամերգութեան դպրոցին ընդհ. սրահը ժողովուեցաւ հոծ բազմութիւնը ուր երգուեցաւ «Ո՛վ մեծաքանչ զու յեզու» երգը և կատարուեցան չնորհաւորութիւնք :

Ըստ յայտագրի հայ զինուորներու միւլիքով բոլոր ժողովուրդը մեծաթափօր յառաջացաւ Բողոքական եղբարց ժողովարանը, ուր նախ խօսք առաւ Տիար Ն. ԲՆՃԷԿԵԱՆ, Մէրսինի Հայ Բող. Եկեղեցւոյ լիազօրը, և բարի գալուստ մաղթեց հայերէն լեզուով, որուն յաջորդեց բողոքական մանկանց հայերէն երգերը : Յետոյ խօսեցաւ Վերապատուելի Կէօքալալաճեան հայերէն լեզուով, հակառակ անոր որ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով բեմէն կը խօսէր այդ լեզուն՝ ի պատիւ Ասահկի և Մեսրոպի Վեր. Կէօքալալաճեանը խօսեց յետ այսու հայերէն լեզուով խօսել այդ բեմէն և ամէն ճիշդ յինչայել հայ լեզուի տարածման համար :

Յետոյ զեր. Սարաճեան Հայր Սուրբը Հայ և Բողոքական եղբարակցուեթեան սոյն նորանշան կապը շնորհաւորեց, որուն հիմնաքարը դրաւ, ըսաւ, Մարաշի մէջ Վեհ. Ասահկ կաթնիկուսը և հանդէսը վերջացած համարուելով նոյն նուագով և թափօրով, ժողովուրդը առաջնորդուեցաւ Եկեղեցի և ցրուեցաւ քաղցրիկ տպաւորութեան մը ներքեւ :

Կէս օրէն վերջ ժամը 2ին վերստին նոյն հոծ բազմութիւնը հաճած էր պատուել վարժարանին սրահը, Հանդէսը սկսաւ «Բամբ որոտան»ով, առաջնորդութեամբ դաշնակին, զոր կ'ածէր Տիկին Վիքթորիա Չէրչեան : Յետոյ դաշնակի վրայ Քարմէն Միլվան զարնուեցաւ Տիկին Մարութեանի կողմէ, որուն ջութակով միացաւ տիար Գալուստեան և Ֆիլիբով տիար Գրաչարեան :

Բանախօսեց Տիկին Ղազեբեան՝ իգական սեռի զերը երեսն քերելով յետոյ երգ մը ազգիկանց կողմէ : Օր. Գարախաթունեան բանախօսութիւն մը ըրաւ, որուն յաջորդեց Տիկին Չերչեանի դաշնակահարութիւնը, յետոյ մանչերու խմբերը, որմէ վերջ գրաւոր ճառեր կարդացին Տիկին Հ. Չէլվեան և Տիկին Չէրչեան : Խօսեցան նաև Օր. Վարդուհի և Օր. Նէվրուզեան : Բոլոր ճառերը և կտորները եռանդազին ծափերու արժանացան : Ժողովրդեան ուրախ սրտով խումբին առջև կրթական ֆօնտին համար հտնդանակութեան ձեռնարկուեցաւ և ժապաւինեալ տոմար մը մէջտեղ դրուելով պատշաճ խօսքերով բացատրուեցաւ հանգանակութեան նպատակը : Նոյն շաբաթ օր հաւաքուած զուամբը յանգեցաւ 250 օսմ. ոսկի : Ասկէ զատ բոլոր հանդիսականներուն կուրծքը զարդարող «413—1513, Ս. Ասահկ Ս. Մեսրոպ» վերատառութիւնը կրող խորհրդանշաններու վաճառումէն ալ անջատարար 20 օսմ. ոսկի գոյացաւ :

18 հոկտեմբերի կիրակի օրուան հանդէսը սկսաւ յետ ժամերգութեան ժամը 9ուկէսին, և հանդէսը բացուեցաւ «Նժանեալ Մօսկոսի» շարականով, որուն յաջորդեց ազգ. վարժարաններու անօրէն Տիար Մնովք Արմէնի «Հայ գրականութիւնը յետ Մեսրոպայ» բանախօսութիւնը : Խօսեցաւ նաև Միացեալի Կրիկեան քննիչ Տիար Միքայէլ Նաթանեան, Նիթ ունենալով «Հայ գրականութիւնը նախ քան զՄեսրոպ» : Յետոյ նախընթաց օրուան ֆօնտի հանգանակութիւնը շարունակուելով գումարը յանգեցաւ 310 օսմ. ոսկի : Պ. Նտայան արտասանեց Ա. Չօպանեանի «Գեղոն ի պատիւ Հայ լեզուի» և Օր. Սաստիթեան «Ս. Ասահկի մահը» :

Թէև այս միջոցիս մեր Հայ-կաթնիկ եղբարց կողմէ բանախօսութիւն մը որոշուած էր, բայց մեղ անյայտ պատճառներով տեղի չունեցաւ :

Այս առթիւ Կրիկիւր Վեհ. կաթնիկուսին և Պատրիարքարան հեռագրուեցաւ օրուան տօնին առթիւ չնորհաւորական հեռագիր մը :

Սոյն սիրուն հանդէսը փակեց օսմ. դրամատան անօրէն Խ. էֆ. Գրաչիրեան հայկական տառերու վրայ իր բրած մասնագիտական տեսութեամբ և միեւնոյն ատեն օրուան տօնին առթիւ ժողովրդեան ծանոյց նորահաստատ թանդարանի մը հիմնարկութիւնը, և հանդէսը վերջացաւ աննման խանդավառութեան մը ներքեւ :

Մէրսինի նման փոքրիկ գաղութի մը կողմէ կատարուած սոյն փայլուն և աննման հանդէսը, ինչպէս նաև հանգանակութեան քանակը — որ յուսով է թէ աւելի պիտի բարձրանայ յետոյ — ցոյց կուտայ թէ օրուան վեհ տօնին յիշատակը պիտի գիտանան արմատաւորապէս անմահացնել, սոյն զուամբը վեհ և ազգօգուտ ձեռնարկի մը յատկացնելով միայն :

Կրթական ֆօնտին մասնակցեցան նոյնպէս Պապական և Բողոքական անհատներ :